ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.12.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/182

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ 26/26-1/20415-2019 գրությամբ «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Սոցիալական ապահովության ծառայության 03.12.2019թ. թիվ 02/14-5/28153-2019 գրության հիման վրա, 09.12.2019թ. թիվ 26/26-1/20415-2019 գրությամբ նախաձեռնել է «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/182 ընթացակարգի շրջանակներում 17.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Սոցիալական ապահովության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Սոցիալական ապահովության ծառայությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու, Ծառայություն) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.12.2019թ. թիվ 02/14-5/28153-2019 գրությամբ հայտնել է, որ 2019 թվականի նոյեմբերի 7-ին Սոցիալական ապահովության ծառայության կողմից «ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով հայտարարվել է Ծառայության կարիքների համար տպագրության աշխատանքների գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով երեք կազմակերպություն՝ այդ թվում «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ն: Հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն՝ Ընկերության կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերն էլեկտրոնային ստորագրությամբ տնօրենի փոխարեն ստորագրել է Պետրոսյան Մերին սակայն համակարգում հայտով ներկայացված չէ հայտի փաստաթղթերը ստորագրելու և armeps համակարգով ներկայացնելու լիազորությունը հավաստող փաստաթուղթը, ինչը չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 4.4 կետով սահմանված պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի 2019թ. նոյեմբերի 15-ի նիստի որոշմամբ հանձնաժողովի նիստը կասեցվել է և հրավերով սահմանված կարգով ժամանակ է տրվել անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն Ընկերությունը հայտի փաստաթղթերը ստորագրելու և armeps համակարգով ներկայացնելու լիազորությունը հավաստող փաստաթուղթը չի ներկայացրել հանձնաժողովին: Գնահատող հանձնաժողովի 2019թ. նոյեմբերի 19-ի նիստի որոշմամբ մերժվել է «ԱՀԱ Պոլիգրաֆ»

ՍՊԸ-ի հայտը հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/182 ընթացակարգի շրջանակներում 17.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/182 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/182 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Սոցիալական ապահովության ծառայության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ 26/26-1/20415-2019 գրությունը, Սոցիալական ապահովության ծառայության 03.12.2019թ. թիվ 02/14-5/28153-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը

ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Սոցիալական ապահովության ծառայության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերն էլեկտրոնային ստորագրությամբ տնօրենի փոխարեն ստորագրել է Պետրոսյան Մերին, սակայն համակարգում հայտով ներկայացված չէ հայտի փաստաթղթերը ստորագրելու և armeps համակարգով ներկայացնելու լիազորությունը հավաստող փաստաթղթերը, ինչի չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 4.4 կետով սահմանված պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և նույն օրը ծանուցել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ հրավերով սահմանված ժամկետում «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ն

հանձնաժողովին չի ներկայացրել հայտով ներկայացրած փաստաթղթերը ստորագրելու և armeps համակարգով ներկայացնելու լիազորությունը լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 4-րդ կետի 4.4 ենթակետով սահմանվել է, որ հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

«ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ի հայտում (կից հավելվածներով) նշվել է, որ Ընկերության տնօրենը հանդիսանում է Կ. Արմենակյանը, սակայն էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել է Մերի Պետրոսյանի կողմից: Միևնույն ժամանակ հայտով չի ներկայացվել Մերի Պետրոսյանի կողմից Ընկերության հայտը ներկայացնելու լիազորությունը հավաստող փաստաթուղթը, որը չի ներկայացվել նաև Ընկերությանը Կարգի 41-րդ կետով սահմանված կարգով ծանուցելուց հետո:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ն «ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ 26/26-1/20415-2019 գրությամբ «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**